



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ՅՈՒՆԻԱՐ, 2021

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՐՄՈՍ 34

ԳՈՂՈՒԹԻԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Անդադար Տէրը պիտի օրհնաբանեմ.  
անոր օրհներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ:  
Տէրն է միակ պարծանքս.  
Ես Տիրոջ դիմեցի, եւ աղօթքիս պատասխանեց,  
վիս ազատեց բոլոր վախերէս:  
Տիրոջ մօտեցէք, որպէսզի ուրախութեամբ ճառագայթէք,  
եւ յուսախաբ չէք ըլլար բնաւ:  
Ճաշակեցէք, եւ տեսէք՝ թէ ինչքան քաղցր է Տէրը.  
Երանի անոր՝ որ Տիրոջ կ'ապաւինի:  
Հպօրագոյն մարդիկն իսկ կարօտութեան  
եւ անօթութեան կրնան մատնուիլ,  
սակայն Տիրոջ դիմողները բանի մը կարօտ պիտի չմնան:  
Եկէք, որդեակներ, մտիկ ըրէք ինձի,  
եւ ես ձեզի սորվեցնեմ՝ թէ ինչ է Տիրոջ վախը:  
Կ'ուզե՞ս երկար կեանք ունենալ,  
կ'ուզես բարօր օրեր տեսնել.  
Լեզուդ չարախօսութեան մի ծառայեցնէր,  
շրթներդ բնաւ թող նենգութիւն չխօսին:  
Հեռու մնա չարիքէն, եւ բարիք ըրէ,  
խաղաղութիւն կամեցիր եւ վայն հետապանդէ:  
Տիրոջ աչքերը արդարներուն վրայ կը հսկեն,  
ականջները միշտ պատրաստ են անոնց աղաչանքը լսելու:

### ՆԱՐԱԿԱՆ- ԱՐՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղեղոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



## ԱՌԱՎԱՑ

### **ՆԵՐԱՍՏԱԿԱՆ**

Աստուածաշունչ Մատեանի Հին Կրակարան բաժնի գիրքերը ծանօթ են իրենց ենթաբաժանումներով՝ Օրէնք, Մարգարտութիւն եւ Գիրքեր, որոնք իւրաքանչիւրը կը ներկայացնէ իրեն յարույճող Մարտիկոսի պարտաւարձ փրկութեան ծրագիրը: Օրէնքի գիրքերն են, Օրէնքի ճամբով, Մարգարտական գիրքեր են, մարգարտական պարգամներով, պարմական կամ իմաստասիրական գիրքեր են, այդ ճամբով. բայց եւ այնպէս բոլորն ալ կը հեղափոխեն մէկ նպատակ. ներկայացնելու Աստուծոյ փրկութեան ծրագիրը անկեալ մարդուն համար պարտաւարձ, որպէսզի մեղաւոր, անկեալ մարդը կարդալով, դաստիարակուելով պարտաւարտի հասնելու այդ փրկութեան, որ իր լուսնը գրաւ Զրիստոսի աշխարհ գալով ու Անոր պարտաւարձով, որպէսզի Իր թափախ արիւնով մեղքերու քաւութիւն շնորհէ մարդուն, եւ ըստ այնմ առաջնորդէ մարդը հասնելու յաւիտենական կեանքին:

Անցնող սերտոյութիւններու ընթացքին փորձեցինք սերտել Աստուածաշունչի Հին Կրակարանի գիրքերէն՝ Օրէնքի, մարգարտութեան ինչպէս նաեւ իմաստասիրական գիրքերէն ոմանք, օրինակ, Ծննդոց, Ելից, Երեմիայի, Դանիէլի, Ժողովողի գիրքերը. այս անգամ պիտի փորձենք սերտել Առակաց գիրքը:

**Հեղինակը:** Անանդութեան համաձայն այս գիրքը կը պարկանի Սողոմոն Իմաստունի գրչին, այնպէս ինչպէս գիրքի սկիզբին կ'ըսուի այդ մասին. *»Իսրայէլի թագաւորին Դաւիթի որդիին Սողոմոնին առակները«* 1 հմր:

**Գրութեան թուական:** Շար հաւանական է որ գրուած ըլլայ Սողոմոնի թագաւորութեան տարիներուն 970-930 Ն.Ք.

**Գրութեան ոճը կամ տեսակը:** Իմաստուն խօսքերու հաւաքածոյ, Առակներու ճամբով:

**Գրութեան նպատակը:** Իմաստուն խօսքերու ճամբով եւ աստուածային իմաստութեամբ կարենալ հասկնալ կեանքի նպատակը, ինչ է իմաստութիւն կոչուածը: Ի՞նչ են կեանքի դժուարութիւնները, եւ ի՞նչպէս յաղթահարել այդ դժուարութիւնները:

Ինչո՞ւ առակներու ձեւով ներկայացնել ըսուածը: Արդեօք կարելի չէ՞ պարզ բացատրութեամբ ըսել ըսելիքը: Գրիգոր Տաթեւացին պիտի ըսէ. *»Որովհետեւ առակը օգտակար է ըսուած խօսքին եւ անոր բացատրութեան համար: Որովհետեւ առակը հասանելի է հասկնալի է սիրելիներու համար, մինչ անհասանելի է անհասկնալի՝ օտարներուն եւ անարժաններու համար: Որովհետեւ առակը որպէս երեւելի օրինակ, կ'օգնէ աներեւոյթը ճանչնալու«:* Որովհետեւ երեք տեսակի խօսք կայ: Կայ պարզ սովորական խօսքը, որ ամէն մարդ կը գործածէ: Կայ առակաւոր խօսքը, որ ուղղուած է աշակերտներուն, կամ իմաստուն խօսք, որ յարույճ է իմաստուններուն:

Հետքերականօրէն երբ կ'ուսումնասիրենք Սողոմոններն ու Առակները ապա կը տեսնենք, որ անոնք չափածոյ են, այսինքն բանաստեղծութեան նման: Որովհետեւ Սողոմոնները՝ երգ են, անոր համար ալ չափածոյ են, իսկ առակներու պարագային խրատ են, ուստի դիւրին սորվելու եւ միտք պահելու համար չափածոյ ձեւով գրուած են: Մէկ այլ ուրիշ հեղափոխական երեւոյթը այն է, որ Աստուածաշունչ Մատեանին մէջ ունինք չորս տեսակի գրութեան եղանակներ.

1. Խօսքը երկար, միտքը՝ չափածոյ, ինչպէս Մովսէս մարգարէի խօսքը իր ժողովուրդին:
2. Խօսքը չափածոյ, միտքը՝ երկար, ինչպէս Յոբի գիրքը, Սողոմոնները, Երգ Երգոց:
3. Խօսքը եւ միտքը չափածոյ, ինչպէս Առակաց եւ Սիրաք, որովհետեւ խրատական են:
4. Խօսքը եւ միտքը երկար են, ինչպէս Եսայի եւ այլ մարգարէներ:

Գրիգոր Տաթեւացին կը բացատրէ, որ Սողոմոն Իմաստունի երեք գիրքերը՝ Առակաց, Ժողովողի եւ Երգ Երգոց, խրատներ են մարդոց երեք տարբեր տեսակի խաւերուն ուղղուած: Առակները՝ պարանիներուն, Ժողովողին՝ երիտասարդներուն, իսկ Երգ Երգոցը՝ ծերունիներուն: Առակաց գիրքը կը պարկերացնէ որպէս քաճարի մութքի սրահը, իսկ Ժողովողի գիրքը, Սրբութիւն բաժինը, իսկ Երգ Երգոցը՝ Սրբութիւն Սրբոց մասը: Առակաց գիրքով կը հասնինք հաւաքքի իմաստութեան, Ժողովողի գիրքով աշխարհի ունայնութեամբ երկնաւոր յոյսին, իսկ Երգ Երգոց գիրքով՝ Աստուծոյ անախարհ սիրոյն: Երբ կը ոտնակոխենք մարմնի ցանկութիւնն ու կամքը, ահա միայն այն արեւն կը հեռանանք աշխարհէն եւ կրնանք սուրբ սրտով սիրել Աստուծոյն: